



ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԼԲԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՏՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՆԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

10 հուլիսի 2013թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ն. Նազարյանի
Անդամակցությամբ՝ Վ. Նովիաննիսյանի
Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Նայկազ Գալստյանի դիմումով գործը
քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Նամաձայն ՆՆ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝
քաղաքացի Նայկազ Գալստյանը դիմել է ՆՆ սահմանադրական դատարան՝ խնդրելով
«Պետական փուրքի մասին» ՆՆ օրենքի 31-րդ հոդվածի «գ» ենթակետը ճանաչել ՆՆ Սահ-
մանադրության 18-րդ, 19-րդ, 20-րդ եւ 31-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր»: Ըստ
դիմողի՝ վիճարկվող դրույթը, ինչպես նաեւ վերջինիս հետ փոխկապակցված՝ «Պետական
փուրքի մասին» ՆՆ օրենքի 22-րդ հոդվածն այնքանով, որքանով չի նախատեսում պար-
տադիր բեկանման ենթակա դատական ակտերի դեմ ներկայացվող բողոքների համար
պետական փուրքի վճարումից ազատում՝ օրենքի ուժով կամ դատարաններին տրված լիա-
զորությունների շրջանակներում, չի համապատասխանում ՆՆ Սահմանադրության 18-րդ,
19-րդ, 20-րդ եւ 31-րդ հոդվածներին:

Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով
«Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 32-րդ եւ 69-րդ հոդվածների պահանջ-

ներով՝ դաբական կազմը գտնում է, որ վերոհիշյալ դիմումով գործի քննության ընդունումը ենթակա է մերժման հետեւյալ պարճառաբանությամբ.

- դիմողը վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը փորձում է հիմնավորել՝ ենթադրյալ օրենսդրական բացը մաբնանշելով:

Օրենսդրական բացի կապակցությամբ սահմանադրական դաբարանի դաբական կազմն անհրաժեշտ է համարում նշել, որ այն՝ որպես իրավունքի բացի փարաբեսակ, իրավական կարգավորման ոլորտում գրնվող փաստական հանգամանքների նկաբմամբ կոնկրետ նորմաբիվ պաբվիրանի բացակայությունն է: ՏՏ սահմանադրական դաբարանն իր՝ 2010 թվականի փեբրվարի 5-ի ՄԴՈ-864 որոշմամբ անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դաբարանի եւ օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գրնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմաբիվ պաբվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դաբարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է փվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք: Զարգացնելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դաբարանը 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՄԴՈ-914 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դաբարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ, կամ օրենսդրության մեջ համապաբասխան իրավական երաշխիքների առկայության պաբագայում ձեւավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը:

Այսպիսով, սահմանադրական դաբարանի դաբական կազմն արձանագրում է, որ իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա է սահմանադրական դաբարանի քննությանը, երբ կոնկրետ գործով միաժամանակ առկա են օրենսդրական բացի՝ սահմանադրական դաբարանի կողմից մաբնանշված վերոհիշյալ չափանիշները, այն է՝ կոնկրետ սահմանադրական իրավունքի խախտում կամ այդ խախտման պոբենցիալ հնարավորություն եւ օրենսդրության մեջ այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքների բացակայություն կամ օրենսդրության մեջ համապաբասխան իրավական երաշխիքների առկայության պաբագայում ձեւավորված հակասական իրավակիրառական պրակտիկա,

- դափական կազմը գտնում է, որ դափաքննության արդյունքում դիմողի համար առաջացած անբարենպաստ հետեւանքներն ընդամենը նրա նկարմամբ կայացված համապարասխան դափական ակտերի արդյունք են, այսինքն՝ խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավազափության հարց:

Առաջնորդվելով ՏՏ սահմանադրական դափարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 որոշման մեջ արքահայրած իրավական դիրքորոշմամբ, համաձայն որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավազափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դափարանի մասին» ՏՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դափարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ, գտնում ենք, որ փվյալ դեպքում առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դափարանի մասին» ՏՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախարեսված հիմք:

Ելնելով վերոշարադրյալից եւ դեկավարվելով «Սահմանադրական դափարանի մասին» ՏՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին եւ 6-րդ կետերով եւ 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՏՏ սահմանադրական դափարանի թիվ 1 դափական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Քաղաքացի Նայկազ Գալստյանի անհափական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

10 հուլիսի 2013 թվականի
ՍԴԴԿՌ/1-20